Ճապոնիայի կառավարության և Հայաստանում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) միջև հայտագրերի փոխանակման ստորագրման արարողությունը՝ «Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձանց և հյուրընկալող համայնքների հիմնական ենթակառուցվածքների և սոցիալական ինտեգրման աջակցության ծրագրի» շրջանակներում

2024 թվականի փետրվարի 28-ին ՀՀ կառավարության շենքում Ճապոնիայի կառավարության և Հայաստանում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) միջև տեղի ունեցավ հայտագրերի փոխանակման ստորագրման արարողությունը՝ «Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձանց և հյուրընկալող համայնքների հիմնական ենթակառուցվածքների և սոցիալական ինտեգրման աջակցության ծրագրի» շրջանակներում:

Դրամաշնորհի համաձայնագիրը ստորագրեցին դեսպան ԱՈԿԻ Յուտական և Հայաստանում ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ տիկին Նաթիա Նացվլիշվիլին՝ ՀՀ փոխվարչապետ պարոն Տիգրան Խաչատրյանի, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար պարոն Գնել Սանոսյանի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար պարոն Նարեկ Մկրտչյանի, ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ պարոն Մնացական Սաֆարյանի և այլոց ներկայությամբ:

Ծրագիրը ֆինանսավորվում է Ճապոնիայի կառավարության կողմից մոտ 3 մլն ԱՄՆ դոլարի չափով և իրականացվելու է ՄԱԶԾ Հայաստանի կողմից: Ծրագիրը նպատակ ունի արձագանքել Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձանց և հյուրընկալող համայնքների էական կարիքներին:

Մասնավորապես, այս նախաձեռնությունը անցյալ տարվա հոկտեմբերին Ճապոնիայի կողմից տրամադրված 2 մլն ԱՄՆ դոլարի չափով «Լեռնային Ղարաբաղից տեղահանվածների համար անհետաձգելի օգնության դրամաշնորհին» հաջորդող ծրագիր է: Ակնկալվում է, որ այն նվազեցնելու է հյուրընկալող համայնքների տնտեսական բեռը, օգնություն է տրամադրելու տեղահանվածներին, ներառյալ բազմաթիվ խոցելի խմբերին, ինչպիսիք են տարեց կանայք և երեխաները, և խթանելու է հյուրընկալող համայնքների և տեղահանվածների միջև սոցիալական ինտեգրացիան՝ դրանով իսկ նպաստելով Հայաստանում հումանիտար իրավիճակի կայունությանը և բարելավմանը:

Ստորագրման արարողության դահլիճը

Փոխվարչապետ պարոն Տիգրան Խաչատրյանի ելույթը

Դեսպան Առկիի ելույթը

Տիկին Նացվլիշվիլիի ելույթը


Դրամաշնորհի համաձայնագրի ստորագրումը


Խմբային նկար